



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 28 ՀՈՒՏԵՄԲԵՐ, 2019

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 63

ԾԱՐԱԻ ԵՄ ՔԵԶԻ, ՈՎ ՏԷՐ

Ով Աստուած, իմ Աստուածս, քեզ կը փնտռեմ անձկագին,  
հոգիս ծարաւ է քեզի, մարմինս քեզի կը փափաքի՝  
խոպան, ճաթաբաժ, անջուր մնացած հողի պէս:  
Ուստի սրբարանդ եկայ՝ քեզ փեսնելու,  
գօրութիւնդ եւ փառքդ դիպելու համար:  
Որովհետեւ քու սէրդ կեանքէն աւելի կ'արժէ.  
ուստի շրթներս պիտի գովարանեն քեզ,  
ամբողջ կեանքիս ընթացքին պիտի օրհնաբանեմ քեզ,  
եւ ձեռքերս աղօթքով դէպի քեզ բարձրացնեմ:  
Հոգիս խնճոյքի մէջ պիտի ըլլայ ու կշտանայ,  
եւ շրթներս ցնծութեան երգերով պիտի օրհնեղեն քեզ:  
Երբ կը պառկիմ՝ քեզ կը յիշեմ,  
գիշերն ամբողջ՝ քու մասիդ կը մտածեմ,  
որովհետեւ օգնական եղար ինձի.  
քու թելերուդ հովանիին փակ ցնծութեամբ կ'երգեմ:  
Ես քեզի կապուած կը մնամ,  
եւ քու աջդ կը պահէ գիս:

### ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

## ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



### ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

14 ԳԼՈՒԽ

#### ԱՀԱՒՈՐ ԵՐԱՇՏԸ (14:1-18)

Կ'անցնի մէկ այլ ուրիշ պարգամի, այս անգամ երաշտ: Պարմական ռեւէ փուեալ չունինք Երեմիայի օրերուն երաշտի դէպքի, հակառակ այն իրողութեան որ քանի մը առիթներով Աստուածաշունչ Մարեանը կը ներկայացնէ երաշտի պարագաներ, օրինակ Եղիա մարգարէի օրերուն: Երաշտի այս երեւոյթը այսպէս իբրև պարգամ փրկուած պարժական միջոց մըն է ուղղուած Իսրայէլին, անոր մեղքին պարճառով: Երաշտին հետ մէկտեղ կայ նաեւ սովի պարագան: Այնքան ծանր է այս դէպքը, որ Յուդան սուգ կը բռնէ եւ անոր դռները կը նուաղին (2 հմր): Այսպէս դռները ըսել կ'ուզէ ժողովուրդը: Իսկ երաշտի պարագան այնքան ծանր է, որ մինչեւ իսկ ազդուած են ազնուականները: Այնքան ծանր է վիճակը իրենց մեղաւորութեան, որ մինչեւ իսկ իրենց գլուխները կը ծածկեն (3 հմր):

Մարգարէն կը միջամտէ եւ կը խոստովանի, թէ այս բոլորի պարճառը մեր անօրէնութիւնն է, որ Աստուծոյ դէմ մեղանշեցինք: Սակայն, մարգարէն կը խնդրէ որ Աստուած, Իր անուանը համար, որ ողորմած ու գթած է, ողորմի իրենց (7 հմր): Աստուած ոչ միայն ողորմած ու գթած է, այլ նաեւ՝ Իսրայէլի յոյսը, նեղութեան արեւն՝ փրկիչը: Եւ մարգարէն հարց կու փայ, թէ այս բոլոր եղածներուն մէջ, ինչո՞ւ արդեօք Աստուած երկրի վրայ հիւրի պէս է, կամ գիշերներ իջեւանող ճամբորդի պէս: Այսինքն՝ անարբեր: Բայց, ընդհակառակը, մարգարէն կը խոստովանի ըսելով. «Դուն ոչ թէ միայն ճամբորդի պէս անցնող մըն ես, այլ մեր մէջ կը բնակիս, ուստի մեզ մի՛ թողուր» (9 հմր): Կը նշանակէ հիմա փակաւին այն ժամանակն է, որ Տէրը պիտի չմիջամտէ: Կը նշանակէ, Տէրը պիտի չստանայ անոնց աղաչանքն ու աղօթքը:

Տէրը կ'ըսէ. «Անոնք ասպանդական շրջիլը սիրեցին, եւ իրենց ուրքերը չզայեցին», այսինքն կը նշանակէ փրկէ փրկէ շրջիլ, թափառիլ եւ օտար աստուածներու ետեւէ երթալ: Այս իսկ պարճառով Տէրը անոնց չհանեցաւ, չհաճեցաւ: Ուստի իրենց անօրէնութեան պարճառով պիտի պարժուին, բայց անոնց համար դուն աղօթք մի՛ ըներ: Եթէ նոյնիսկ ծոմ պահեն ու աղաղակեն, մտիկ պիտի չընեն, գոհ մասրուցանեն պիտի չընդունին, որովհետեւ պիտի սպառեմ զանոնք (11-12 հմր):

Երեմիա մարգարէն կը յիշեցնէ, որ մարգարէներ եկան ու ըսին. «**սուր պիտի չտեսնէք, սով պիտի չըլլայ, խաղաղութիւն պիտի փամ**»: Տէրը կը պարասխանէ, ըսելով, թէ. «**անոնք սուր մարգարէներ են Աստուծոյ անունը օգրագործելով սուր մարգարէութիւն կ'ընեն ու ժողովուրդը կը մոլորեցնեն**» (14 հմր), ինչպէս Քրիստոս ալ նոյնը պիտի ըսէ. «**շար մը սուր մարգարէներ պիտի գան ու իմ անունով սուր մարգարէութիւն պիտի ընեն ու շարերը մոլորեցնեն**» (Մտթ 24:11): Սուր մարգարէութիւն է՝ սուր փեսիքներ, սնտրի գուշակութիւններ անով մոլորեցնելու ժողովուրդը: Սուր մարգարէութիւններ, որոնք կը քաջալերեն՝ խաղաղութիւն եւ փրկութիւն առանց ասպաշխարանքի, հաւատքի, դարձի ու սրբութեան կեանքի: Անոր համար ալ այն ժողովուրդը որ ականջ կու փայ այսպիսի սուր մարգարէութիւններու մարգարէներուն հետ միասին պիտի կոտորուին: Գալիք կոտորածի համար «**գիշեր ու ցերեկ աչքերը արցունք պիտի թափեն, որովհետեւ ինչպէս աղջիկ մը հօրը համար սիրելի, այնպէս ալ Աստուծոյ ժողովուրդը պիտի կոտորուի**» (17 հմր):

#### ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԸ ՊԱՂԱՏԻ (14:19-22)

Երեմիա մարգարէն դարձեալ խոստովանութեամբ եւ պաղապանքով կը դիմէ Աստուծոյ, որպէսզի Աստուած վերստին ընդունի Իր ժողովուրդը: Հակառակ անոր, որ Տէրը պարտիրեց մարգարէին որ երբեք չաղօթէ այս ժողովուրդին համար, բայց մարգարէն կարծէք այնպէս կը ձեւացնէ, որ չհասկցաւ Աստուծոյ խօսքը, ու ահա աղերսանքով կը դիմէ Աստուծոյ, թէ «**արդեօք բոլորովին մերժե՞ց զիրենք. արդեօք Միտնէն զգուեցա՞ւ. բժշկութեան առիթ չկա՞յ**» (19 հմր):

Մարգարէն ժողովուրդին անունով կը խոստովանի թէ մեղաւորներ են, իրենց հայրերուն անօրէնութիւնը կը ճանչնան, եւ Աստուծոյ դէմ է որ մեղք գործեցին: Բայց Քու անունիդ համար մի զգուիր, փառքիդ աթոռը մի՛ անարգեր, ու մանաւանդ՝ ըրած ուխտդ յիշէ եւ մի՛ արեր (20-21 հմր): Այս բոլորը կարարէ Քու ողորմութեամբդ, եւ ոչ թէ արդարադատութեամբ, այլապէս՝ ռեւէ մէկը ազարում չունի: Բոլորն ալ մեղքի փակ ինկան: Ուստի, ամէն բարիք միայն քեզմէ կու գայ, եւ ոչ թէ հեթանոսներուն սուր աստուածներէն: Անոր համար ալ, ո՛վ Տէր, Քեզի կը յուսանք, որովհետեւ Դուն ես մեր յոյսն ու ապաւենը: